


9683

Մ. ԱՆԴՐՈՍՅԱՆ

ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ՄԻԶՆԱԿԱՐԳ  
ԴՐԱՐՈՑՈՒՄ



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԻ ԳՈՒԹԱԳՈՐԾՎԱԿԱՆ  
ՁԵՐԱՎԱՐ

1935

39665

02 Առևելաբայրություն  
4-19 Յորբայ աշ-խո-  
սիցն. դր. - ում.  
1935

Դ	3	282	2/5 թթ.
M	125	7/1) 80%	

Մանկավարժության-Մանկաբանության Գիտահետազոտա-  
կան ինստիտուտ

09  
ս-19

Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

39665  
39665  
39665

ԳՐ-ԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ  
ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Հաստատված և լժե կողմից



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
1935

26 JUL 2013

Պատ. խմբ. Ս. Հալիքապեայան  
Լեզվ խմբ. Հ Պետրոսյան  
Տեխ. խմբ. Գ. Զենյան  
Մըբագրիչ Ս. Շահբաղյան

ԴԻՐՔԸ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընկ. Լենինը կոմյերիտմիության Յ-րդ համառուսական համագումարում (1920) իր նշանավոր ձառում գտնելով, վոր մենք պետք ե պայքարենք հին, բուրժուական-կալվածատիրական մուշտրայի (խստավարժության), անմիտ բերանացի անելու դպրոցի դեմ, մատղաջ սերնդի գլուխը մնասակար, անպետք, մեռած գիտելիքներով խճողելու դեմ, միաժամանակ վճռականապես պնդում եր, վոր մենք հսկայական սխալ արած կլինեյինք, յեթե վերոհիշյալից յեղբակացնելինք, թե կարելի յե կոմունիստ դառնալ՝ առանց յուրացնելու այն, ինչ կուտակել ե մարդկային գիտությունը. Որինակ բերելով Կ. Մարքսին, վորը գիտական սոցիալիզմի իր ուսմունքը մշակելիս հենվել ե մարդկային գիտելիքների կայուն հիմքի վրա, ընկեր Լենինը հիշեցնում ե, վոր «կոմունիստ կարելի յե դառնալ միայն այն ժամանակ, յերբ հիշողությունդ հասըստացնես այն վողջ հարստությունը գիտենալով, վոր մշակել ե մարդկությունը». «Մեզ պետք չե անիմաստ բերան անելը, բայց մենք պետք ե յուրաքանչյուր սովորողի հիշողությունը զարգացնենք ու կատարելագործենք հիմնական փաստերի գիտությամբ... Դուք պետք ե վոչ միայն յուրացնեք այդ փաստերը, այլ ե յուրացնեք այնպես, վոր զբանց քննադատորներ վերաբերվեք, վորպեսզի ձեր միտքը չծանրաբեռնեք».

Հետա. 3462. Գլավ. 287. Պատվեր 1082. Տեղամ 1000

Հանձնված ե արտադրության 21 սեպտ. 1935

Ստորագրված ե տպելու 21 հոկտ. 1935

Գետիքատի տպարան, Եկեղեցան, Ա Գնունի, 4

այն խլամով, վոր պետք չե, այլ այն հարստացնեք  
բոլոր այն փաստերով, առանց վորի չի կարող լինել  
ժամանակակից կրթված մարդ:

Հայտնի յե, վոր վողջ մարդկության կուլտուրա-  
կան—գիտական ժառանգությունը, վողջ մարդկության  
խոտացրած փորձի արդյունքը սիստեմավորված, հա-  
վաքված և գրավոր ձեռվ՝ գրեթերի մեջ, վորոնք միաւն  
պրոլետարիատի դիկտատուրայի որոր ե, վոր իրապես  
դարձել և ամենալայն աշխատավորական մասսաների  
սեփականությունն, դրան ապացույց պարբերական և  
վոչ պարբերական մամուլի այն չտեսնված ծավալումը,  
վոր կա մեզ մոտ, Բուրժուական կարգերում աններե-  
վայ կայի գիտական, քաղաքական, գեղարվեստական,  
ուսումնական գրքերի հարյուր հազարների, միլիոնների  
տիրաժը սովորական յերեսութեան մեզ մոտ: Հայտնի յե  
այն հատուկ ուշադրությունը, վոր ընկ. Ենինը, մեր  
կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը  
նվիրում են գիրքը ամենալայն մասսաների կողմից  
ոգտագործելու իրական հնարավորություն ստեղծելուն,  
հատկապես գրադարաննային գործի կազմակերպման  
ինդրին:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊՈԼԻՏԵՆՆԻԿ ԴՊՐՈՑԸ ՅԵՎ. ԳԻՐՔԸ

Մեր դպրոցում կոմունիստական դաստիարակու-  
թյուն ապահովելու համար, վորպես վերջինիս կարե-  
վորագույն բաղկացուցիչ մաս, պետք ե աշակերտնե-  
րին տանը գիտությունների հիմունքները, դպրոցում  
ապահովենք սիստեմավորված գիտելիքների ճշտիվ  
համանագծված գումար (ՀԱՄԿ(թ)կ կենտկոմի սեպտ-  
եմբի վորոշումից), և Սիստեմավորված գիտելիքների

ճշտիվ սահմանված գումար» դպրոցի համար տալիս են  
առաջին հերթին դասագրքերը, վորոնք առանց խախ-  
տելու տվյալ դիսցիպլինի բարձրորակ գիտականու-  
թյունը, այն հրամցնում են դպրոցականին տվյալ  
տարիքին մատչելի ու ըմբռնելի ձեռվէ:

Սրանով ել պայմանավորվում ե դասագրքի կարե-  
վորագույն դերը պոլիտեխնիկ դպրոցի կոմունիստական  
դաստիարակության գործում:

Միանգաման հականալի յե և այն, վոր դպրոցի  
մահացման հակալենինան տեսության ներկայացու-  
ցիչները դպրոցի, ուսուցչի, կայուն ծրագրերի ժխտման  
հետ միասին ժխտում եյին սիստեմավորված գիտելիք-  
ներ տվող դասագրքի գոյության իրավունքը մեր  
դպրոցում: Այդ ժխտողական վերաբերմունքը դեպի  
դասագրքն ստանում և իր «տեսական» հիմնա-  
վորումը և զգալի ժամանակաշրջանում իր գործնական  
կիրառումը մեր դպրոցներում: Կայուն դասագրքը  
դարձել եր համանիշ հին բուրժուակապիտականության  
դպրոցի ժամանգության. դրա վոխարեն մեր դպրո-  
ցում կիրառվում եյին այսպես կոչված «աշխատանքի  
գիրքը», ժուանալգասազրելը, «ցրիվ դասագրքերը»,  
վորոնք ամեն բան եյին, բայց վոչ սիստեմավորված  
գիտելիքներ տվող ձեռնարկներ:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն իր պատ-  
մական վորոշումներով բոլցիկյան հականարված հասց-  
նելով դպրոցի մահացման հակալենինան տեսությանն  
ու պրակտիկային, չեր կարող անտեսել դասագրքի  
խնդիրը, վորին և նվիրված են կենտկոմի 1934 թ.  
փետրվարի 12-ի վորոշումը դասագրքերի մասին, ինչ-  
պես և 1934 թ. մայիսի 16-ի ՀԱՄԿ(թ)կ կենտկոմի և

ԽՍՀՄ-ի ժողկոմիսորհի վորոշումները պատմության և  
աշխարհագրության դասավանդման մասին:

ԳՐՔԻՑ ՈԳՏՎԵԼ ԿԱՐՈՂԱՆԱԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոնի յե այն խոշոր նշանակությունը, վոր ունի  
գիտությունը մեր սոցիալիստական շինարարության  
բոլոր բնագավառների համար: Իսկ այդ գիտությանը  
տիրապետելու հիմնական միջոցներից ե գիրքը:

Գիրքը մասսաների սեփականություն դարձնելու  
և այն մաքսիմալ եֆեկտավորությամբ ոգտագործելու  
հնարավորություն ստեղծելու խոչը խոշոր տնտե-  
սական քաղաքական ու կուլտուրական նշանակու-  
թյուն և ստանում: «Պետք ե վոր մարդ կարողանա  
ոգտվել կարդալու և գրելու կարողությամբ, վորպեսզե  
նա կարդալու բան ունենաւ: «Մեզ ամենից տուչ  
անհրաժեշտ ե սովորել կարդար գրել և կարդացածը  
հասկանալ» (Լենին):

Բավկական չե միայն գիրք ունենալ, բավկական չե  
կարդալ և անգամ կարդացածն «ընդհանուր առմամբ»  
հասկանալ պետք և սովորել և կարողանալ այդ գիրքը  
կարդալ, ոգտագործել այն և վերցնել նրանից մաքսի-  
մումը: Իսկ այդ չեն կարողանում մեղնից շատ շա-  
տերը, անգամ նրանք, ովքեր յերկար տարիներ գործ  
են ունեցել գրքի հետ: Այսպիսով գրքով աշխատելու  
մեթոդիկան կարենը նշանակություն և ստանում:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՅԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընթերցանության բնույթը տարբեր կարող և լինել՝  
նայած կարդացողի տարիքին, պատրաստությանը,  
կարդալու հատուկ նպատակին, նյութին և այնու Այս-

պես՝ ընթերցանության նպատակը կարող և լինել՝  
ա) վորեւ գիտական-մասնագիտական խնդիր լուսա-  
բանել, լուծել. բ) վորեւ խնդրի, բնագավառի մասին  
գիտելիքներ, տեղեկություններ ստանալ. գ) ընթերցողի  
ընթանուը կրթական-կուլտուրական մակարդակը բարձ-  
րացնել. դ) գեղարվեստական ընթերցանություն, վորը,  
հատկապես մեղ մոտ, բացի նեղ իմաստով գեղար-  
վեստական հաճույք տալուց, ունի խոշոր դաստիա-  
րակչական նշանակություն, իմացական արժեք. ե) ըն-  
թերցանություն՝ պարապությունից, ժամանցի համար  
և այն, վերջին բնույթի ընթերցանությունը, վորը  
շատ տարածված և բուրժուական հասարակության  
ունենոր խավերի մեջ, մեղնում չնշին տեղ և բռնում:

Նայած ընթերցանության բնույթին ու նպատակին՝  
նրա կազմակերպումն ու մեթոդն ել տարբեր են լի-  
նում. այլ կերպ և կարդում և ոգտագործում գիրքը  
գիտահետազոտական պրոբլեմով զբաղվող գիտա-  
կանը, այլ կերպ՝ ուսանողը. այլ կերպ են կարդաց-  
վում լրագրերը, յումորիստական ժուռնալը, վեպը,  
պատմվածքը և այն, վերջինս իր հերթին՝ տարբեր  
կերպով են կարդամ քննադատ-գրականագիտը և սո-  
վորական ընթերցողը:

ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ՊԻՏԻ ԼՈՒՍԱԲԱՆՎԵՆ ՍՈՒՅՆ  
ՆԱՄԱԿՈՒՄ

Վերեւում թվարկած ընթերցանության տարբեր տե-  
սակներից մեզ այստեղ հետաքրքրում և գրքի ոգտա-  
գործումը միջնակարգ գպրոցում՝ ուսումնական նպա-  
տակով, վորակեղ գրքով աշխատելու հիմնական նպա-

տակն և տարբեր ուսումնական դիսցիպլինների գծով գիտելիքներ, ընդհանուր կամ մասնագիտական կըրթություն ձեռք բերել (տեխնիկումներում):

Այստեղ չի շոշափվելու գրքով աշխատելու խնդիրը տարրական դպրոցում, այստեղ չի քննվելու նմանապիս մալրենի լզզի դասավանդման մեթոդիկային վերաբերող ընթերցանության մեթոդիկան, ինչպես և գեղարվեստական ընթերցանության խնդիրը։ Մենք յենում ենք այն յենթադրությունից, վոր աշակերտներն ավարտելով պարրական դպրոցը՝ հիմնականում տիրապետել են կարգալու տեխնիկային։ Այստեղ պետք է քննարկվի միայն, թե միջնակարդ դպրոցում ինչպես պետք է աշակերտներն ոգտագործեն դասագիրքը և ոժանդակ ուսումնական գիրքը՝ հանրակրթական առարկաների ուսումնասիրության համար։

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՐՅՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՅԵՎ ՏԱՆՔ

Աշակերտի աշխատանքն ուսումնական գրքով—տեղի յենունում դպրոցում՝ ուսումնական պարապմունքների ժամերին, դասին՝ ուսուցչի ներկայությամբ և անմիջական ղեկավարությամբ, և տանը (առհասարակ ուսումնական պարապմունքներից գույք), յերբ դպրոցում ուսուցչի աված դասերն աշակերտն ինքնուրույն պատրաստում կամ մշակում է։ Սակայն աշակերտի ինքնուրույն պարապմունքները նույնպես չպետք է ընթանան դպրոցի ու ուսուցչի կողմից առանց վորեև ղեկավարման ու ցուցումների։ Հատկապես զըրքով աշխատանքը դպրոցում ուսուցիչն այնպես պիտի

կազմակերպի, վոր այդ ոգնի վոչ միայն աշակերտի անմիջական դասարանական աշխատանքներին, այլև նրա տնալին ինքնուրույն աշխատանքներին, վորոնք կատարվում են գրքով։ Բացի այդ՝ անհրաժեշտ ե, վոր ուսուցիչը յերբեմն հաճախի աշակերտների տները, վորպեսզի ծանոթանա նրանց աշխատանքներին և ոգնի թե աշակերտներին ու թե նրանց ծնողներին՝ այդ աշխատանքներն ավելի լավ կազմակերպելու համար։

Աշակերտներին տնային աշխատանք, ինչպես նաև գրքով աշխատանք տալիս պետք է ղեկավարվել տարրեր դասարանների համար տնային աշխատանքներին հատկացվող ժամանակի նորմայով (միջնակարգ դպրոցի համար  $1\frac{1}{2}$ —2 ժամ)։ Բացի այդ, նույն դասարանում դասավանդող ուսուցիչներն այնպես պիտի կարգավորեն գործը, վոր նույն որը բոլորը հնարավորություն ունենան աված աշխատանքը վերև նշած ժամանակում կատարելու։

### ԿԱՐԴԱԼՈ ՅԵՎ ՆՐԱ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Առանց մտնելու կարդալու պրոցեսի մանրամասն հոգեբանական անալիզի մեջ, կարգալը կարելի յեսահմանել վորպես մի պրոցես, յերբ գրաֆիկ նշանների միջոցով մենք ըմբռնում (ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ) ենք հնչյուններ, բառեր, ամբողջ նախադասություններ և նրանց կապակցություններ։ Կարդալը, սակայն, վոչ միայն գրաֆիկ նշանների և բառերի ու նախադասությունների միջև կապակցություն ստեղծելն ե, այլ և կարգացած բառերի, նախադասությունների, ամբողջ

հասկածների, հողվածների իմաստի ըմբռնումն և,

Թանի վոր այստեղ մենք քննարկում ենք միջնաշակարգ դպրոցի ինդիրը, յենթադրում ենք, վոր աշակերտներն արդեն հիմնականում ձեռք են բերել կարդալու (և կարդացածը հասկանալու) այդ հիմնական նախադրյալները: Այդ նախադրյալները վերաբերում են նախ ընթերցանության տեխնիկային՝ բառերը կարդալ և հասկանալ ըստ իրանց ընդհանուր պատկերի՝ առանց առանձին տառերի և հնչյունների վերլուծելու: Նույն պահանջը վերաբերում և ամբողջ ֆրազներ կարդալուն, դրանց հետ կապ ունեցող կետադրության նշաններին, տրամաբանական շեշտին (վորն արդեն կարդացածի իմաստին և վերաբերում) և այլն:

Կարդացածը հասկանալու համար անհրաժեշտ և հասկանալ կարդացածի բոլոր բառերը, այդ բառերից կազմված նախադասություններն ու պարբերությունները, ինչպես և կարդացածի վողջ բնագիրը: Նախադասության մեջ հանդիպած բոլոր բառերն առանձին առանձին հասկանալ—զեռ ամբողջ նախադասությունն ու ֆրազը հասկանալ չի նշանակում, վերջինիս համար անհրաժեշտ և ըմբռնել այդ բառերի տրամաբանական—քերականական կապակցությունները: Նմանապես առանձին նախադասությունների, անդամ պարբերությունների ըմբռնումը զեռ չի ապահովում ամբողջ բնագրի (հոդվածի, գրքի) ըմբռնումը. դրա համար անհրաժեշտ և, վոր ընթերցողը բնագրում շոշափվող նյութի, թեմայի բնագավառից ունենա անհրաժեշտ տեսական ու գործնական գիտելիքներ, տեղեկություններ, անձնական փորձ և այլն: Վորքան աշակերտը քիչ ունի այդպիսի տեղեկություն ու փորձ, ուսուցիչը

կարդալուց առաջ կամ կարդալու ընթացքում այնքան ավելի պետք ե լրացնի այդ բացը՝ աշակերտներին այս կամ այն ձևով հաղորդելով այդ տեղեկությունները:

### ԲԱՌԱՐԱՆԻՑ ՈԳՏՎԵԼԸ

Կարդացածը հասկանալը խոշոր չափով կախված է կարդացածի մեջ պատահած առանձին բառերի, տերմինների իմաստը հասկանալուց: Պետք ե սկզբից նեթ վարժեցնել աշակերտներին, վոր նրանք մայրենի կամ ուսուց լեզվում հանդիպող բոլոր անհասկանալի բառերի ճիշտ նշանակությունն իմանան կամ ուսուցչից հարցնելով, կամ (միջնակարգ դպրոցում) բառարանի ոգնությանը դիմելով: Թե ուսուցչին թե բառարանի ոգնությամբ անձանոթ բառի նշանակությունն իմանալուց հետո ցանկալի յե այդ բառը և նրա նշանակությունը գրանցել հատուկ կազմած բառատետրում, վորովհետեւ այդպիսով բառն իր նշանակությամբ ավելի լավ և ամրապնդվում մեր հիշողության մեջ: Աշակերտներին պետք ե սովորեցնել ինքնուրույն կերպով բառարանից ոգտվել: Դրա համար պետք ե նրանց ծանոթացնել բառարանի ստրուկտուրային, բառերի գառափորության այբբենական սիստեմին, ինչպես և հայերեն ու ուսուերեն այբբենի հաջորդականության: Դասարանում ուսուցչի անմիջական ոժանդակությամբ աշակերտներն սկզբում պետք ե վարժվեն ու փորձեն բառարանում գտնել պահանջվող բառը և նրա նշանակությունը, վորքը հետո այդ աշխատանքը նրանք կարող են կատարել ինքնուրույն կերպով:

## ԱՐԱԳ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՔԸ

Դանդաղ ընթերցանությունը, ուսման սկզբնական շրջանում բառերը վանկերի բաժանելը և ամբողջ նախադասությունները յերկար դադարներով բառերի բաժանելը վորոշ չափով անխուսափելի էն Այդ բացերն արդեն վերացված պիտի լինեն տարրական դպրոցում։ Միջնակարգ դպրոցի հենց առաջին տարում (5-րդ դաս.) աշակերտները պետք են արդեն տիրապետեն արագ և վարժ կարդալու տեխնիկային։

Ընթերցանության ցուցանիշները հիմնականում լեռներն են։ — Ընթերցանության ճշտությունն ու կանոնավորությունը, ընթերցանության արագությունը և կարդացածի իմաստի ըմբանումը։ Ընթերցանության արագությունը կապված է թե կարդացածի ճշտության և թե մանավանդ կարդացածի իմաստի ըմբոնման հետ։ Զաշլած ուսման սկզբնական ու գրանանաչության շրջանը, կարդալու արագության վորոշ մինիմում անհրաժեշտ և ճիշտ և իմաստալի ընթերցանության համար։ Ավելի դանդաղ կարդալը մեծ մասամբ չի նշանակում ավելի ճիշտ ու իմաստը հասկանալով կարդալ։ Չատ հաճախ՝ ճիշտ հակառակն և նշանակում։ Դպրոցի հիմնական նպատակներից մեկն ել աշակերտներին վարժուագությունն են (արագ ընթերցանությունն ել ի հարկե ունի սահմանը, վորից դենը նա ունենում են իր բացասական հետեանքները)։

Տարրական դպրոցում աշակերտների ընթերցանության արագությունը մոտավորապես հետեայալը պիտի լինի (տվյալները վերաբերում են ուսմական դպրոց-

ներին, մեր դպրոցների համար դժբախտաբար հետազոտություններ չկան), 1-ին դասարանում մի ըոպերում բարձրաձայն ընթերցանության ժամանակ՝ 20—25 բառ (լուս ընթերցանության ժամանակ՝ 30—35 բառ). 2-րդ դասարանում՝ 35—40 (50—60), 3-րդ դասարան՝ 55—60 (85—90), 5-րդ դասարան՝ 75—90 (90—100) (Աֆանասյան «Ընթերցանության և գրքի աշխատանքի մեթոդիկան տարրական դպրոցում»):

\* Վարժ կարգացողի ընթերցանության միջին արագությունը կազմում է մի ըոպերում շուրջ 1000 նշան կամ մի ժամում 20—25 եջ, այսինքն  $1\frac{1}{2}$  տպաղբական թերթ (Պոպով «Գիտահետազոտական աշխատանքի կազմակերպություն ու տեխնիկան», Պետհրատ, 1933թ.): Սակայն ընթերցանության արագությունը չպետք է անցնի մի ըոպերում 1500 նշանից։

Արագ կարդալը վոչ միայն ահագին ժամանակ ետնտեսում, այլև հանդիսանում է հիմնական միջոցը՝ ընթերցանության ընթացքում վորպես ամբողջություն ըմբոնելու վոչ միայն ամբողջ բառեր, այլև ամբողջ նախադասություններ ու պարբերություններ։ Ակնակ ընթերցողները դժվարությամբ են ըմբոնում կարդացածի իմաստը վոչ միայն և վոչ այնքան այն պատճառով, վոր չեն հասկանում առանձին բառերը, այլ վոր դժվարությամբ են կապակցում ու ըմբոնում ամբողջ նախադասություններ, պարբերություններ։

## ՀՈՒՄ ՅԵԿ ԲԱՐՁՐԱՉԱՅՑ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարձրաձայն ընթերցանությունը գերակշռող պիտի հանդիսանա միայն ուսման նախնական, գրագիտական շրջանում, յերբ հնչունի, բառի, նախադասության

պատկերն ավելի լավ ամրապնդելու համար տեսողական ըմբռնմանն ավելանում են մոտորամկանային և լողական տպավորությունները: Այս զրջանում բարձրածայն ընթերցանությունն անհրաժեշտ ենակ այն պատճառով, վոր այս գեպքում միայն ուսուցիչը հնարավորություն կունենա ուղղելու աշակերտների ընթերցանության սխալները: Միջնակարգ դպրոցում բարձրածայն ընթերցանությունն անհրաժեշտ և անխուսափելի յե դառնում, յերբ ուսուցիչը դասարանում առանձին աշակերտների կարդալ ետալիս կամ նրանց կարդալու կարողությունը ստուգելու, կամ աշակերտի կարգացածի նյութը վողջ դասարանի սեփականությունը դարձնելու համար:

Բարձրածայն ընթերցանությունն անհրաժեշտ ենակ արտահայտիչ ընթերցանության կարողություն մշակելու համար:

Մնացած բոլոր գեպքերում դպրոցում և դպրոցից դուրս պետք են գերազանց լուս ընթերցանությունը: Լուս ընթերցանությունն իրապես գերազանցում է գրքի և ընթերցանության հետ սիստեմատիկ կապ ունեցողների ճնշող մեծամասնության պրակտիկայում:

Լուս ընթերցանության առավելությունները շատ են. — 1) Լուս ընթերցանության ժամանակ նույն տեղում (ընթերցարան, կարմիր անկյուն, դասասենյակ և այլն) միաժամանակ և անհատորեն կարող են կարդալ բազմաթիվ մարդիկ՝ առանց մեկը մյուսին խանդարելու: Այս հանդամանքը չափազանց խոշոր գործական նշանակություն ունի, և մեր դպրոցները պետք են յիրեխաների մեջ մշակեն լուս ընթերցանության կուլտուրա: 2) Քանի վոր լուս ընթերցանության ժա-

մանակ չեն շարժվում արտասանելու հետ կապ ունեցող մեր որդանները (թեպետ որդանների շատ թույլ և անշմարելի շարժում տեղի յե ունենում և լուս ընթերցանության ժամանակ), ինչպես և մեր լողության որդանը չի ծանրաբեռնվում լողական տպավորություններով, — կարդալիս մենք շատ ավելի նվազ չափով ենք վատնում նյարդամկանային եներգիա, հետևապես և ավելի քիչ ենք հոգնում: 3) Լուս ընթերցանությունը հնարավորություն ետալիս ավելի լավ կենտրոնանալու և ավելի լավ ըմբռնելու նյութը (թերևս բացառություն կազմեն խիստ կերպով արտահայտված լողական տիպերը): 4) Լուս կարդալու չափազանց կարեռը առավելություններից մեկն ել այն ե, վոր այդ գեպքում ընթերցանության արագությունն զգացի կերպով բարձրանում ե (25% մինչև 200%): իսկ մենք արգեն տեսանք թե ինչ խոշոր նշանակություն ունի արագ ընթերցանությունը:

Գիրք ԳՏՆԵԼԸ ՅԵՎ ԳՐՔԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԸ

Ցենթադրելով, վոր ուսումնական նպատակներով կարդալու գեպքում աշակերտներին առհասարակ հայտնի յե այն նպատակը, խնդիրը, վորը լուծելու ու կատարելու համար նա պիտի կարդա այս կամ այն գրականությունը, գրքի աշխատանքը կարելի յե հետեւյալ 3 մոմենտների վերածել:

ա) Տվյալ խնդրի, նյութի, թեմայի համար պահանջվող գրական աղբյուր գտնել այսինքն իմանալ թե ինչ գրքից ինչ պիտի կարդալ:

բ) Այդ գրական աղբյուրը կարդալ, յուրացնել  
գ) Յուրացրածը ֆիքսացի յինթարկել (սևեռել) —  
զբանցել, ընդ վորում վերջին մոմենտը պարտադիր չե  
բոլոր գեղքերում, ինչպես այդ մենք կտեսնենք:

Այստեղ քննարկելով միայն առաջին մոմենտը,  
պետք է հետեւյալն ասել. դպրոցում ընդհանրապես,  
ինչպես և միջնակարգ դպրոցում առհասարակ, ուսուց  
իչն և մատնանշում դպրոցում այս կամ այն առար  
կայից ուսումնակարգով խնդրի համար անհրաժեշտ  
գիրքը (վորը հիմնականում լինում ե տվյալ առարկայի  
դասագիրքը, յիրիմն ել ոժանդակ գրականություն)՝  
և այդ գրքից՝ այս կամ այն հոդվածը, գլուխը, բա  
ժինը, հատվածը, եջերը: Սակայն դպրոցի հիմնական  
նպատակներից մեկն ել այն ե, վոր աշակերտին սո  
վորեցնեն գրքից այս կամ այն նպատակի համար  
ինքնուրույն կերպով ոգտվել: Գոնե միջնակարգ դըպ  
րոցն ավարտելով՝ նա պետք ե արդեն ձեռք բերած  
լինի այդ կարողությունը (այն ինչ մեղնում նույնիսկ  
բարձրագույն դպրոցն ավարտելուց հետո ել գրքով  
աշխատելու հմտությունն անբավարար ե): Սրա հա  
մար անհրաժեշտ ե, վոր դպրոցում ուսուցիչն աստի  
ճանարար վարժեցնի աշակերտներին ինքնուրույն  
կերպով գտնել անհրաժեշտ դրական աղբյուրները.  
սկզբում կարելի յե մատնանշված գրքի այս կամ այն  
բաժինը, գլուխը ցույց տալով, չմատնանշել եջը, վոր  
պեսզի աշակերտն ինքը ցանկի կամ ալլ մը ջոցով գտնի  
համապատասխան գլուխը, հատվածը, այնուհետեւ մատ  
նանշելով միայն գիրքը՝ վարժեցնել աշակերտին՝  
ըստ տվյալ խնդրի, թեմայի գանել գրքի անհրաժեշտ  
գլուխը, բաժինը, հոդվածը, և վերջապես կարողանալ

իմանալ, գտնել տվյալ հարցի, խնդրի համար պա  
հանջվող գիրքը կամ մի շարք գրքեր:

Ամենից դժվարն իհարկե վերջինն ե և այստեղ հա  
ճախ դժվարանում են վոչ միայն աշակերտները, այլ  
և նույնիսկ գրքով սիստեմատիկ աշխատողները:

Գիրքն ընտրելու ժամանակ պետք ե առաջին հեր  
թին ղեկավարվել նրանով, վոր ընտրած գիրքը տվյալ  
խնդրի համար ամենակարևորը, արժեքավորը լինի:  
Դրա համար առաջին հերթին իհարկե պետք ե խոր  
հըրդարկցել տվյալ առարկայի դասատույի հետ: Միջնա  
կարգ դպրոցում, մանավանդ ստորին դասարաններում,  
աշակերտի «կենդանի բիբլոգրաֆիան» ամենից առաջ  
ուսուցիչն ե լինելու Բայց ինչպես ասացինք աշակեր  
տը պետք ե հետզհետե սովորի այդ խնդիրը ինքնու  
րույն լուծել: Սրա համար աշակերտներին պետք ե  
սովորեցնել՝ ոգտվել բիբլոգրաֆիկ ժողովածուներից  
(որինակ, հայերեն լեզվով լույս տեսած՝ լենինի յեր  
կերի բիբլոգրաֆիան): Ուսւսերեն լեզվով հրատարակ  
վում են բազմաթիվ ընդհանուր կամ մասնագիտական  
բիբլոգրաֆիկ-աննոտացիոն ժուռնալներ, ուղեցույց  
ներ (որ. „Книжная летопись“, „Журнальная ле  
топись“, „Учебно-педагогическая литература“ և  
այլն): Վերև հիշված ժողովածուներում, ժուռնալնե  
րում, ուղեցույցներում տրվում ե կամ լույս տեսած  
գրականության քննադատությունը, գնահատականը,  
կամ աննոտացիան, կամ ուղղակի ցուցակը: Դիրքն  
ընտրելու գործը հեշտանում ե, յերբ բացի հեղինակի,  
գրքի անունը, հրատարակությունը և այլն տալուց,  
տրվում ե նաև գրքի ուղենողիան, կամ գոնե աննոտա  
ցիան, յերբ բացի գրքի հեղինակի անվան, հրատա



բակչության, հրատարակման տեղի, ժամանակի մասին տված տեղեկություններից, արվում են գրքի բովանդակության մասին հիմնական տեղեկություններ և, վորքան կարելի յն գոնե ամենաընդհանուր գնահատականը:

Անհրաժեշտ գիրքն իմանալու, գտնելու միջոցներից են. — վորեն մասնագիտական խնդիր հետազոտող հոգվածի, գրքի վերջում մատնանշվող գրականությունը (վորից ողափել ե տվյալ հեղինակը, կամ վորից պետք ե ողափել տվյալ մասնագիտական խնդրի ուսումնասիրության համար). այդպես նաև հանրագիտական բառարանների խորոր հոգվածների տակ մատնանշվող գրականությունը, պարբերական մամուլում հրատարակվող հայտարարաբությունները լույս տեսնող գրականության մասին, ինչպես և գրախոսականներն ու քննադատականները լույս տեսած գրքերի մասին:

Ինարկե այս բոլոր աղբյուրներից լրիվ ոգտվելու համար աշակերտը դպրոցում վոչ հնարավորություն և վոչ ել անհրաժեշտություն կունենա, բայց դպրոցը և ուսուցիչը պետք ե հնարավոր չափով նըսան զինեն հարկ յեղած դեպքում գրանցից ոգտվելու կարողությամբ: Դուրսցած այս խնդրում, բացի ուսուցչից, աշակերտներին ոգնելու յեն դպրոցական (կամ քաղաքակին) գրադարանի վարիչը, ինչպես և գրադարանի գրացուցակը և քարտերը, վորոնցից ոգտվելու դորձը նույնպես պետք ե սովորեցնել աշակերտին:

Յերկրորդ խնդիրը — այս կամ այն ձևով ձեռք բերած գրքի նախնական ծանոթությունն և, վերջինս անհրաժեշտ ե բոլոր դեպքերում՝ նախքան գրքի ըն-

թերցանությանը, մշակմանն անցնելը. այդ կրկնակի անհրաժեշտ ե դաշնում այն գեղագում, յերբ գերքն ընտարփած, ձեռք ե բերված լոկ նրա հեղինակի և վերնագրի անուններին ծանոթանալու հիման վրա, առանց գրքի մանրամասն բովանդակությանն ու արժեքին ծանոթ լինելու: Վորովհետև շատ հաճախ վերնագիրը միայն ընդհանուր գաղափար ե տալիս, իսկ հաճախ վոշինչ չի ասում գրքի բուն բովանդակության մասին, կամ հայտնի չե, թե գրքի վերնագրի տակ գտնվող որյեկտն ինչ առումով ե լուսաբանված գրքում (որինակ, «Սեփանա լինք») վերնագիրն ունեցող գրքի կամ հոգվածի միայն վերնագիրը գեռ վոշինչ չի ասում գրաքովանդակության մասին, վորովհետև այդ վերնագրի տակ կարող ե լինել Սեփանա լինի գեղարվեստական նկարագրությունը, նրա ջրա-յերկրաբանական ուսումնասիրությունը, նրա անտեսական նշանակությունը, նրա պատմությունը (այլն): Նախքան գրքի կարդալուն անցնելը, պետք ե գրքին նախորոք ծանոթանալ, այսինքն իմանալ՝ ով ե հեղինակը, գրքի վերնագիրը, յենթավերնագիրը (յեթե կա), քանիելորդ հրատարակությունն ե, հրատարակության թվականը: Բայց հաճախ, ինչպես տեսանք, այս ընդհանուր տեղեկությունները վոչինչ կամ շատ քիչ բան են ասում գրքի եյության ու բովանդակության մասին. դրա համար պետք ե նայել գրքի ցանկը, առանձին հոգվածների, բաժինների ու գլուխների վերնագրերը: Գրքի մասին նախնական գաղափար կազմելու գործին ոգնում են գրքի հեղինակի, խմբագրի կամ հրատարակողի նախաբանը, հեղինակի կամ խմբագրի ներածությունը. յեթե չկա այս բոլորը, կամ անզամ գրանց

գոյության դեպքում ցանկալի յև թերթել աչքի անց-  
կացնել զիրքը ընտրովի՝ վորոշ կտորներ կարդալ:  
Դրքի ցանկին ծանոթանալը կամ թերթելն անհա-  
ժեղս և հատկապես այն դեպքում, իերք պետք և կար-  
դացվի ու մշակվի վոչ թե ամբողջ գիրքը, այլ միայն  
վորոշ բաժիններ, գլուխներ:

ԳԻՐՔ ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐԲԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՑԵՎ ԴՐԱ  
ՀԵՏ ԿԱՊԱԾ ԴՐՔԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԶԵՎԵՐԸ

Նայած ընթերցանության տարբեր նպատակներին (տես վերը) և գրքի բնույթին՝ զիրքը կարդալու,  
մշակելու ձևերը կարող են հետևյալը լինել. —

ա) Գիրքը թերթել (գրքի նախնական ծանոթու-  
թյան համար), բ) զիրքը թռուցեկ կերպով աչքի անց-  
կացնել (զրքի նախնական ծանոթության ժամանակ՝  
առանց ամբողջ զիրքը կարդալու, վորոշ հարցի պա-  
տասխանը գրքի այս կամ այն բաժնում ստանալու  
համար), դ) ուշադիր ընթերցում ամբողջ զրքի կամ  
համապատասխան բաժնի (աշխատանքի այս ձևն և  
գերակշռում մեր գալուցներում՝ դասագիրքը կամ ու-  
սումնական գիրքն ուսումնասիրելու ժամանակ), դ) վո-  
րեկ Փունդամենտալ աշխատության խոր և հիմնովին  
ուսումնասիրություն (որինակ՝ Մարքսի և Կապիտալ-ի  
ուսումնասիրությունը մեր բարձրագույն դպրոցնե-  
րում). Առանձին տեղ են բոնում գեղարվեստական ըն-  
թերցանությունը, ամենորյա պարբերական մամուլը

ՈՒՇԱԴԻՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1. յաղովի խմբագրությամբ լույս տեսած «Ինչպես  
պետք և աշխատել զրքով» աշխատության մեջ հետե-  
ղյալ պահանջներն են առաջադրվում ուշադիր ընթեր-  
ցանությանը. 1. կարդալու համար մատչելի գիրք  
վերցրու. 2. Քիչ կարդա, բայց հիմնովին. բավական  
չե լոկ կարդալ մատնանշված եցերը, այլ պետք և հիմ-  
նովին հասկանալ և ամրապնել հիշողության մեջ:  
3. կարդալս կարողացիր ջոկել հիմնականը յերկրոր-  
դականից, յեղբակացություններն ապացուցյներից ու  
պարզաբանող որինակներից: 4. Ընթերցանության  
ժամանակ հանդիպած բոլոր անհասկանալի բառերն ու  
արտահայտությունները գրիր ու հետո դիմիր բառա-  
րանին կամ ուսուցչին: 5. Շատ յերկար կանգ մի առնի  
անհասկանալի տեղի վրա, այլ շարունակի ընազրի  
ընթերցանությունը, վորովհետև հաճախ շարունակու-  
թյան մեջ լուսաբանվում ե անհասկանալի տեղը:  
6. Ընթերցանության ժամանակ գրիր ընթերցանու-  
թյան կապակցությամբ ծագած բոլոր հարցերը՝ հետո  
ուսուցչին դիմելու համար: 7. կարդա մատնանշած  
եցերը, կարդացածի բովանդակությունից բղխող հար-  
ցեր տուր ինքդ քեզ և դրանց պատասխանիր: Ավելի  
լավ և կարդացածիդ համառոտ բովանդակությունը  
պատմես նույն հարցն ուսումնասիրած ընկերոջդ:  
8. Շատ գրելով մի տարվիր, կոնսափեկտիր միայն գրքի  
հիմնական դրույթները, կարեոր կամ յուրացման հա-  
մար ամենաղեգիսր տեղերը: 9. Ցեթե ուսումնասիրվող

համար մի քանի գիրք և մատնանշված; ուշադիր կերպով մշակիր միայն գլխավոր ձեռնարկը, իսկ մյուսներից վերցրու միայն լրացուցիչ փաստեր և տեղեկություններ:

### ԿԱՐԴԱՑԱԾԻ ՀԻՄՆՈՎԻՆ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ

Հանդիսանում ե դպրոցական ուսուցման հիմնական նպատակը. դրա համար անհրաժեշտ ե կարդացածը հիմնովին ըմբռնել, կարողանալ տվյալ խնդիրը, նյութը կապել անցած նյութերի, խնդիրների հետ, դանել նրանց ներքին կապը, առնչությունը, կարողանաք ուսումնասիրվող խնդիրները կապել մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայի հետ, կարողանալ դպրոցում ձեռք բերած գիտելիքներն անհրաժեշտ պայմաններում ինքնուրույն կերպով կիրառել՝ տեսական կամ գործնական խնդիրները լուծելու համար։ Առանց այս բոլորի՝ մեր դպրոցի ուսուցումը կսատանար սխոլաստիկ բնույթը, իսկ նրա տված գիտելիքները կդառնային անպեսք բալաստ, կարդացածը, ինչպես և առհասարակ դպրոցում ձեռք բերածը յուրացնելու մի այլ կարևոր պահանջը ձեռք բերած գիտելիքների, գոյնե կարևոր, հիմնական մասի ամրապնդումն ե աշակերտի հիշողության մեջ։ Ճիշտ ե, դպրոցում սովորած բոլոր փաստերը, տեղեկությունները հնարավոր և անհրաժեշտ չե հիշողության մեջ պահել, բայց յուրաքանչյուր ուսումնական առարկայից վորոշ փաստեր, տեղեկություններ ու գիտելիքներ աշակերտը պարտավոր ե այնպես հիմնովին յուրացնել ու ամրապնդել իր հիշողության մեջ, վոր դրանք դառնան նրա մշտական սեփականությունը։

Վերը հիշված (Լյադովի խմբագրությամբ) գրքում կարդացածը հիմնովին յուրացնելու համար առաջարկվում են հետեւյալ միջոցառումները. 1. Յուր խոսքերով ընկերոջը պատմել կարդացածի հիմնական բովանդակությունը և մտքերը; 2. Արտագրել այն նախադասությունները, վորոնք սեղմ ու վառ կերպով ձևակերպում են կարդացածի հիմնական մտքերը; 3. Կարդացածի առնչությամբ առաջացած հարցերը գրի առնելու 4. Կազմել կարդացածի կոնսպեկտը, կամ թեզերը; 5. Կարդացածի կապակցությամբ ծագած սեփական մտքերը գրի առնելու։

Գիրքը կամ նրա վորոշ բաժինը լուրջ կերպով ուսումնասիրելու դեպքում չպետք ե բավականանալ այն մի անգամ կարդալով, այլ դրան պետք է կրկին դառնալ վորոշ ժամանակ (մի քանի որ) անցնելուց հետո։

ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐՅԻ ԼՈՒՐՋ ՅԵՎ ԽՈՐԱՑՐԱԾ ԸՆԹԵՐԱՑԱՆՈՒԹՅԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՆ ՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպես վերը տեսանք, զանազան ձեի գրանցումները խոչը նշանակություն ունեն ինչպես դպրոցում դասագրքի, ուսումնական գրքի ուսումնասիրության, այնպես ել մանավանդ վորեկ փունդամենտալ աշխատության հիմնովին ուսումնասիրության դեմքում։

Ընթերցանության ժամանակ և ընթերցանության կապակցությամբ կատարված գրանցումները մեծ չափով ուժանդակում են մշակվող նյութի հիմնովին յուրացմանը և ամբապնդմանը։

ա). Գրանցման ժամանակ ընթերցանության նյութը և ավելի լավ և ըմբռնվում (воспринимается) լրա-

ցուցիչ տպավորության — զգայության՝ մկանամուռուրային զգայության միջոցով. այդ վերաբերում ե մանաւանդ ըմբռնման նման տիպերին. սրանք հաճախ թե ընթերցանության և թե դասախոսությունների ժամանակ գրանցումը կատարում են վոչ միայն և վոչ այնքան այն նպատակով, վոր գրանցածը հետագայում կարդալով վերնիշեն, այլ վորովհետեւ հենց գրանցման ընթացքում առաջացած մկանամուռուային զգայություններն ոգնում են նյութի ավելի լավ տպավորման (բ). Համարյա բոլոր տիպի գրանցումներն ավելի կամ պակաս չափով հարկադրում են գրանցողին՝ ավելի ուշովիք լինել գեպի ընթերցանության նյութը, կարողանալ ջոկել կարդացածի մեջ կարեռը և յերկրորդականը. դրա հետ միասին գրանցումները սովորեցնում են գրքի հեղինակի կամ իր սեփական մտքերը ձեւակերպել և արտահայտել խտացրած, կշռադատածու ըմբռնելի ձեռով. Գրանցումները միաժամանակ հարկադրում են կանգ առնել ու մտածել (քրումայի) կարեռը և հանգուցային մտքերի վրա՝ այդ մտքերն իր համար պարզելով, յերեխն տարով իր սեփական ձևակերպումը, կամ դրանցից ու դրանց առնչությամբ անել իր սեփական յուղակացությունները, սեփական դիտողությունները, տալ իր մտքերը, առաջացած նոր հարցերը, արտահայտել իր վերաբերմունքը դեպի հեղինակի այս կամ այն միտքը և այլն: գ) ինչպես մի անգամ ել հիշատակվել ե, իմաստ չունի և հնարավորություն չկա դպրոցում անցածը կամ կարդացածն ամբողջովին հիշողության մեջ պահել, դպրոցում (ինչպիս և առհասարակ) կարդացածի մի մասն անխուսափելի կերպով պետք ե մոռացվի. վորոշ գիտելիքները,

առեղեկություններ, փաստեր դպրոցականը պետք ե իր հիշողության մեջ ամրապնդի, իր սեփականությունը դարձնի. բայց կան և այնպիսի փաստեր, առեղեկություններ ու գիտելիքներ, վոր անհնար կամ շատ դժվար ե բոլորը հիշողության մեջ պահել, բայց վորոնք կարենը են և հետագայում կարող են պետք գալ. այդ դեպքում մեր հիշողությանն ոգնության և հասնում գիրը: Գրանցումները շատ խոշոր չափով ոգնում են հիշողությամբ վերականգնելու առաջլա կարգացածը, սովորածը, համենայն դեպս դրանց հիմնական, առանցքային մասերը:

### ՆՇՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԶԵՎԵՐԸ

Հետեւյալներն են. — Կարդացած գրքի, հոդվածի պլանը, կոնսպեկտը, թեղերը, առանձին տեղերի քաղվածքները (ՎԱՊՏԵ), ցիտատները, Ընթերցանության ժամանակ գրքի մշակման առանձին միջոց են հանդիսանում հենց գրքի վրա կատարվող զանազան դիտողությունները, նզումները, ընդգծումները, Վորոշ դեպքերում կիրաւում և վողջ հոդվածը, կամ հոդվածի մի մասը կտրելը (ՎԵՐԵԶԿԱ). այս վերջինը գործադրը վում ե միայն լրացրերի, ավելի սակագ՝ ժուռսալների նկատմամբ:

### ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցանության ընթացքում գրանցումներ կատարելը բավականին դժվարին, բարդ և վորակյալ աշ-

խատանք ե, վորն ի վիճակի չե կատարելու միջնաշարդ դպրոցի աշակերտը (դժբախտաբար այդ դեռ չեն կարողանում կատարել անդամ մեր բուհերի ուսանողները, անդամ յերեմն յերկար ժամանակ մտավոր աշխատանքով զբաղվողները) առանց դպրոցի և ուսուցչի յերկարատես, համառ ու սիստեմատիկ աշխատանքի և ոգնության:

Գրանցման վորոշ պարզ ձեերը, — պլան կազմել վորոշ քաղվածքներ (ՎԱՊՆԵՐԻ) անել ուսուցչի անմիջական դեկավարությամբ ու ոգնությամբ, — տեղի յեն ունենում արդեն անդամ տարրական դպրոցում, միջնակարդ դպրոցում պետք ե շարունակել դրանք, անցնելով գրանցման ավելի բարդ ձեերի և ավելի ու ավելի ինքնուրույնություն տալ աշակերտներին. որինակ պարզ պլանից կարելի յե անցնել բարդ պլանի. միջնակարդ դպրոցի բարձր խմբերում սովորեցնել կազմել կարգացածի կոնսուլենտը, ինչպես և թեզիսներ կազմեր Այս բոլոր աշխատանքներն սկզբում պետք ե կատարվեն դասարանում ուսուցչի անմիջական ցուցումներով և ապա պետք ե աշակերտներին տալ առաջադրություններ՝ տանը կամ դասարանում ինքնուրույն կերպով կատարելու այդ աշխատանքները, վոր իհարկե ստորգում և ուսուցչը, վորն անում ե իր դիտողություններն ու շակումները: Ավելի լավ ե բոլորովին չձեռնարկել այդ աշխատանքները, քան ինքնահօսով թողնել աշակերտների հայեցողության ու կարողության: Այդ վոչ թե ոգուտ, այլ վաս կտա աշակերտներին:

ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ  
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Գիրքը կարդալիս գրանցումներ անելը և ավելի լարված ու վորակյալ աշխատանք և պահանջում, և կրկնակի ժամանակ և խլում, այդ պատճառով ել գրանցումներ պետք ե կատարել միայն իրական անհրաժեշտության դեպքում (յերբ ընթերցանության նյութն ուսումնական կամ այլ նպատակներով անհրաժեշտ և խորը և հիմնովին մշակել) և մաքսիմալ ու ցայխոնալությամբ, վորպեսդի այդ անհրաժեշտ արդյունք տա:

Ամերիկացի պրոֆ. Կրառուֆորդն իր «Մատակը աշխատանքի մեթոդիկան» աշխատության մեջ տալիս ենեւելյալ խորհուրդները, վորոնք հիմնականում ընունելի կարող են համարվել. ա) Տվյալ միտքը զրանցեցիք միայն այն ժամանակ, յերբ այդ միտքը միովինը բունել եք (ինարկե՛ բացի այն դեպքերից, յերբ մենք առանձին զրանցում ենք հենց չհասկացածը կամ տարակարձելին): բ) Գրանցման համար ընտրեցեք միայն գլխավոր մաքերը, վորովիկետե այդ դեպքում ավելի քիչ բառերով կարելի յե արտահայտել ավելի հարուստ բովանդակություն: գ) Գրանցման ժամանակ գրեցեք վոչ թե վերնագրերի, այլ թեզիսների ձեռվ, վորովիկետե վերջիններս ավելի շատ բառեր են պահանջում, բայց դրա հետ տալիս են ավելի մեծ բովանդակություն (այս պահանջի նկատմամբ պիտի ասել, վոր վորոշ գեպքերում, մանավանդ յերբ մշակվող նյութը հիմնականում ծանոթ ե գժվար չի, կարելի յե բավականանալ:

միայն վերնագլերով): դ) Գրանցման ժամանակ դուքս գցեցեք վոչ անհրաժեշտ բառերը: ե) Սղեցեք հաճախ հանդիպող բառերը: զ). Ուշագրությամբ կարդացեք հեղինակի ամփոփումները (սեղյումն), կամ վերնադրերը, վորոնց մեջ մեծ մասսամբ արտահայտված են լինում հեղինակի գլխավոր մտքերը. է) Ողովեցեք դիագրամներով և սքեմաններով, յեթե զրանց միջոցով կարելի յե խուսափել յերկար բառային նկարագրություններից: Գրանցման հետ կապված մի այլ խնդիր ել այն ե, թե գրանցումը պետք ե կատարել տվյալ հողվածի, գրքի հենց ընթերցանության ընթացքում, թե ընթերցանությունը վերջանալուց հետո: Նպատակահարմար ե համարվում առաջ ամբողջովին կարդալ հոդվածը, տվյալ գլուխը, բաժինը, անդամ վողջ գիրքը (յեթե ինարկե շատ մեծ չե) և ապա կատարել գրանցում, վորովնեան այդ ձևով նախ ամբողջի մասին գաղափար ե կազմվում, դրանով ավելի հեշտանում ե հիմնականը յերկրորդականից տարբերելլ և այն: Այս բոլոր դիտողությունները ճիշտ պիտի համարել հատկապես դպրոցի պայմաններում: այստեղ գրանցումներն անպայման աջակերտները պիտի կատարեն՝ տվյալ նյութն ըմբռնելուց, մշակելուց հետո: մանավանդ վոր այստեղ այսպիսի նյութերն ել իրենց ծավալով այնքան ել մեծ չեն լինում: Սակայն դպրոցից դուրս մտավոր աշխատանքի ավելի մեծ փորձ ունեցողների համար վերոհիշյալ պահանջը պարտադիր, անգամ նպատակահարմար չպիտի համարել այդ նպատակահարմար չե այն ժամանակ, յերբ մշակվում ե մեծածավալ գիրք. այստեղ ծայրահեղ դեպքում կարելի յե պահանջել վոր գրանցումը կատարվի միայն ամբողջ

գրքի վորով բաժիններ, գլուխներ կարդալուց հետո՝ սակայն այսպիսի աշխատանքներին վարժված լինելու պայմաններում գրանցումները կարելի յե կատարել հենց ընթերցանության պրոցեսում. այդ զգալի չափով տնտեսում ե ժամանակը:

ՊԼԱՆ.— Կարդացածի պլանը կազմելը գրանցման պարզ ձևերից ե և գործադրվում ե արդեն տարրական դպրոցում, յերբ աշակերտներն ուսուցչի անմիջական դեկավարությամբ և ոգնությամբ կարդացած ու մշակած հողվածը մասերի յեն բաժանում և այդ մասերին վերնագրեր դնում:

Պլան կազմել այդ նշանակում ե նշել տվյալ հոդվածում, զիմում, հատվածում կամ ամբողջ գրքում արծարծված մտքերը և այդ մտքերը շատ համառոտ ձևակերպել. այդ ձևակերպումը կարող ե լինել հարցի ձևով. որինակ՝ վորո՞նի են 1905 թ. նեղափոխուրյան շարժիչ ուժերը. կամ վերնագրի, յենթավերնագրի ձևով. որինակ՝ 1905 թ. նեղափոխուրյան շարժիչ ուժերը:

Առհասարակ յուրաքանչյուր գիրք արդեն ունենում ե իր պլանը. գրքի ցանկն ե այդ, վորտեղ արվում են գրքի առանձին մասերի, բաժինների, գլուխների վերնագրերը, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ այդ առանձին մասերի բովանդակության, իմաստի համառոտ ձևակերպումը: Շատ հաճախ հենց այդ առանձին գլուխները, բաժինները նույնպես ունենում են իրենց պլան՝ ավելի մանրամասն վերնագրերի ձևով: Այդ պլան՝ վերնագրերը լինում են վոչ միայն գրքի սկզբե կամ վերջի ցանկում, այլև գրքի բնագրում: Դպրոցում դրանք բավականին հեշտացնում են կարդացածի պլանը կազմելու գործը. ուսուցիչը յեկնելով արդեն

այդ գոյություն ունեցող պլաններից, բազմաթիվ անգամ աշակերտների հետ վերլուծելու տվյալ հողվածը՝ վեր և հանում նրա բովանդակությունը, միտքը և յերեխաների համար պարզ և դարձնում այդ բովանդակության և այդ արտահայտող վերնազրի առնչությունը. կարելի յե նաև յերեխաներին չայտնել վերնադիրը, նրանց կարգալ տալ տվյալ հողվածը կամ հատվածը և առաջարկել ըստ տվյալ բովանդակության, իմաստի՝ վերնազրի տալ, փորը և համեմատել գրքում յեղած վերնազրի հետ. Վերջապես աշակերտաները պետք և ինքնուրույն կերպով դասազբերերում կամ ոժանդակ գրքերում յեղած հողվածները սովորեն վերածել նրանց մեջ պարունակվող մտքերի և այդ մտքերին, բովանդակության ավելի մանր տարրերին անուշներ տալ—վերնագրել.

Այստեղ աշակերտից պահանջվում է վոչ միայն հասկանալ տվյալ հողվածի ամբողջ բովանդակությունը, նրա ամբողջ իմաստը, այլև դրա առանձին մասերը, մտքերը, նրանց հաջորդականությունը և կապը, կարողանալ վորոշել՝ վ՞րաեղ և վերջանում դրանցից յուրաքանչյուրը և վորտեղ և սկսվում հնակյալ:

Պլան կազմելը պահանջում է խոշոր վերլուծական անալիտիկ աշխատանք:

Պլանը կարող ե լինել համառոտ յեվ ընդունակի: Առաջին գեղքում տվյալ հողվածը բաժանվում է ավելի խոշոր մասերի և վերնազրվում, իսկ յերկրորդ գեղքում այդ մասերն իրենց հերթին բաժանվում են մասերի և վերնազրվում: Այստեղ վորպես որինակ տալիս ենք ընկ. լենինի՝ «Կոռպերացիայի մասին» հայտնի հողվածի համառոտ և լուսաբանույթը՝ նույնպես կարելի յե իր հերթին վերլուծել մասերի. այս դեպքում կստանանք ընդարձակ պլան:

Լյադովի խմբագրությամբ լույս տեսած «հնչպես պետք ե աշխատել գործով» աշխատությունից):

Վողջ հողվածը բաժանվում է յերկու հիմնական մասի. առաջին մասը հողվածի սկզբից մինչև հետեւյալ պարբերության սկզբը և՝ «Յև այժմ մտադիր եմ ընթերցողի հետ խոսել այն մասին, թե գործնականապես ինչ ե կարելի և ինչ պետք ե անել հենց այժմ՝ յելնելով այդ «կոռպերատիվ սկզբունքից»:

Այս պարբերությամբ սկսվում է հողվածի յերկրորդ մասը: Հողվածի առաջին մասում խոսվում է կոռպերացիայի նշանակության մասին՝ սոցիալիստական հասարակության կառուցման համար. յերկրորդ մասում խոսվում է, թե ինչպես պետք ե կարգավորել կոռպերացիայի աշխատանքները: Առաջին մասը կարելի յե վերնազրել 1. «Կոռպերացիայի նշանակությունը սոցիալիստական հասարակության կառուցման համար», իսկ յերկրորդ մասը՝ 2. «Կոռպերացիայի կազմակերպման ուղիները մեղնում»: Այս հանդիսանում է «Կոռպերացիայի մասին» ընկ. լենինի հողվածի համառոտ պլանը: Սակայն վերը նշված այս յերկու խոշոր մասերից յուրաքանչյուրը նույնպես կարելի յե իր հերթին վերլուծել մասերի. այս դեպքում կստանանք ընդարձակ պլան:

Հողվածի առաջին խոշոր մասը կարելի յե բաժանել յերկու յենթամասերի, վորոնք կունենան հետեւյալ յենթամասերնազրերը. — 1. Կոռպերացիայի սկզբունքային նշանակությունը. 2. Կոռպերացիայի գործնական նշանակությունը:

Նույն ձևով հողվածի յերկրորդ խոշոր մասը կարելի յե բաժանել յերեք յենթամասերի՝ հետեւյալ յեն-

թավերնագրելով.—1. Պետության կողմից ֆինանսական ոժանդակություն կոռպերացիային. 2. Աշխատավորական մասսաների ներգրավումը. 3. Կուլտուրական կոռպերատորի դաստիարակումը:

Յեթե բացի տվյալ հոդվածի պլանը կազմելուց պետք է կազմվի և դրա կոնսպեկտը, կամ արդեն համապատասխան քաղվածքներ (ՎԵՐԱԿԱ) և ցիտատներ, կարելի յեն հանձնարարել հետևյալ ձեռ. — թերթի ձախ կողմում նեղ շերտի վրա (աջ մասի լայն շերտից գծով կամ ծալով բաժանված) գրել պլանը վերնագրերը, և յենթավերնագրերը. իսկ աջ կողմում յուրաքանչյուր վերնագրի կամ յենթավերնագրի դիմաց գրել համապատասխան կոնսպեկտը—քաղվածքը (ՎԵՐԱԿԱ), ցիտատը, կարելի լեն ի հարկե պլանի մասերը գրել սովորական վերնագրերի և յենթավերնագրերի ձեռով նոր տողերի սկզբին և ընդգծել.

Կոնսպեկտը գրանցման ավելի բարդ և միաժամանակ չափազանց կարեոր ձեռքից եւ կոմանք արդեն պլան կազմելու ժամանակ առաջարկում են պլանի ձեռքի պահպաման և յերրորդ ձեռ (բացի վերնագրերի և հարցերի միջոցով պլանը ձեռքբարպելուց). այսինքն պլան կազմելու ժամանակ հոդվածի մասերը ձեռքի պարզ նախադասությունների ձեռվի: Մանրամասն պլանի պայմանում պլանի սույն ձեռ փաստորեն վեր և ածվում կոնսպեկտի:

Կոնսպեկտը կարդացած գրքի, հոդվածի (կամ լսած դասախոսության) բովանդակության հիմնականի եյալան, սեղմ, համառոտ կապակցված գրանցումն եւ, շարադրումը:

Ընդարձակ պլանն արդեն խոչոր չափով նախա-

պատրաստում եւ կոնսպեկտի աշխատանքները, վորով հետև կոնսպեկտը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ պլանում նշված հարցերի, վերնագրերի ընդարձակ պատասխանը՝ կապակցված շարադրման ձեռվի: Գոյություն ունի և գրանցման մի ձեւ, վորն եյապես միջին, անցման ձեւ եւ հանդիսանում ընդարձակ պլանի և կոնսպեկտի միջև։ Այդ, այսպես ասած, աշխատանքային գրառումն ե („բաօպայ ազնուած“), յերբ կարդացածի սեղմ բովանդակությունը տրվում է վոչ թե նախադասությունների, կապակցված շարադրման, այլ վերնագրերի, յենթավերնագրերի ձեռվի, կամ հաճախ այդ յերկու խառը ձեռվի: Այս ձեւը կիրառելի յե այն դեպքում, յերբ գիրքը, հոդվածը կարդալու, մշակելու ժամանակ չի կարելի բավականանալ միայն պլանով, բայց ծավալուն (լրիվ նախադասություններով շարադրված) կոնսպեկտի կարեք ել չի զգացվում. այն դեպքում, յերբ մշակված նյութի վերաբարդութան համար հարկավոր եւ նշել միայն նյութի հիմնական մտքերին վերաբերող գագաթները, հենման կետերը՝ առանձին վերնագրերի, յենթավերնագրերի, հարցերի միջոցով, վորոնք նորից աչքի անցնելով հնարավոր եւ վերականգնել բոլոր հիմնական մտքերը և բոլանդակության կարեոր տարրերը:

Այս ձեւը կիրառվում ե այն դեպքում հատկապես, յերբ կարդացածի գրանցման նպատակը վոչ այնքան կարդացածն ավելի լավ յուրացնելուն ոժանդակեն ե, այլ դրա կարեոր տարրերը հետագայում մեր հիշողության մեջ վերականգնեն եւ:

Յերբեմն կիրառվում ե այսպես ասած Տեխնուալ կոնսպեկտ, յերբ կարդացածի համառոտ բովանդակությունը տրվում է վոչ թե կոնսպեկտ կազմողի, այլ

դրքի հողվածի հեղինակի բառերով (կոնսպեկտ կազմողի բառերը թույլատրվում են միայն բացառիկ դեպքերում՝ հեղինակի առանձին բառերն ու նախադասությունները կապակցելու անհրաժեշտության դեպքում):

Տեքստուալ կոնսպեկտին պիտի դիմել այն դեպքում, յերբ անհրաժեշտություն և մաքսիմալ հարազատությամբ պահպանել հեղինակի վոչ միայն մտքերը, այլ և դրանց արտահայտման ձեր, այս գեպքում ավելի մեծ վստահություն ել կարող ե լինել վոր նրա մըտքերը նույնպես տրված են առանց աղճատման:

Մյուս կողմից՝ տեքստուալ կոնսպեկտը չափազանց կաշկանդում ե գրանցողին, իսկ շատ հաճախ և խոշոր չափով դժվարացնում նրա գործը, վորովհետև սովորաբար հնարավոր չի լինում սեղմ կերպով՝ հենց հեղինակի բառերով ու նախադասություններով արտահայտել բոլոր կարենոր մտքերը: Այդ պատճառով ել տեքստուալ կոնսպեկտը կիրաւիլում ե և պետք ե կիրառել միայն բացառիկ դեպքերում:

Կոնսպեկտի աշխատանքները նախապատրաստվում են արդեն տարբական դպրոցից, յերբ աշակերտները նախ հարցերի միջոցով, իսկ հետո և առանց հարցերի, պատմում են կարգացած հողվածի հիմնական բովանդակությունը, այս տիպի աշխատանքը յուրահատուկ «բանափոր կոնսպեկտի» աշխատանքը եւ նույն ձևով նախ մշակված հարցերով, ըստ պլանի, իսկ ապա և առանց դրանց՝ կարգացածի համառոտ բովանդակության գրավոր շարադրությն աշակերտի կողմից արդեն վաստորեն կոնսպեկտ ե հանդիսանում: Հարկավոր ե միայն, վոր այս աշխատանքները դպրոցում տարվեն սիստեմով և վորոշ հետեղականությամբ՝ աշխատանքի ավել պարզ

և ճիշտ ձևերից անցնելով ավելի բարդերին (հարցերով պատասխանել պատմել նախորոք գրատախտակի վրա դրելով՝ գրավոր կերպով պատասխանել հարցերին, բանավոր կերպով առանց հարցերի պատմել շարադրել կարգացածի համառոտ բովանդակությունը, նույն անհել գրավոր ձևով):

Վորապես նմուշ այստեղ արվում ե Լյադովի նույն գրքից («Ինչպես պետք ե աշխատել գրքով») Լենինի «Իմպերալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապ» գրքի «Բանկերը և նրանց նոր դերը» գլուխ սկզբի կոնսպեկտը:

## Պ Լ Ա Ն

## Կ Պ Ն Ա Ա Բ Ե Կ Մ

1. Բանկային գործի 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներում կանոնադրացիան: բանկային գործն արագ կենտրոնանում ե: Այսում են ինչպես բաժինների քանակը, այնպես ել իրենց սեփական և ոտար կապիտալի չափը, հնատեալին և կատարվող գործարքների քանակը:

Այսպես՝ Քրանսիական Յ խոշորագույն բանկերը 1870 թվից մինչև 1909 թ. իրենց բաժանմունքների թիվը ավելացրել են 20 անդամ (64-ից 1229), իրենց կապիտալը՝ ավելի քան 4 անդամ. իսկ ավանդներն ավելացել են 10 անդամ: Այս ձանապարհով առանձին-առողջին կապիտալիստներից առաջանում ե կողեկտով կապիտալիստ-բանկը:

Բանկերը վարելով արդյունաբերական ձեռնարկությունների ընթացքի հաջիվութը և այլ գործարքներ, սկզբում նշանաւմ իմանում են նրանց գործերի վիճակը, ապա վերահսկում են դրանց և վերջապես, հեղացնելով ու դժգարացնելով վարկը, սկսում են ամբողջովին վորոշել նրանց բախտը:

Թեզիսները. — Գրքով աշխատանքի շատ ավելի բարե-  
տեսակն են, վորը կարող է կիրառվել միայն միջնա-  
կարգ դպրոցի վերջին դասարաններում։ Աշխատանքի  
այս ձևն ավելի կիրառելի պետք համարել բարձրա-  
գույն դպրոցներում և վորակյալ մտավոր աշխատող-  
ների համար։ բայց ինարկե դրա նախադասրաստումը  
պետք ակնել արդեն միջնակարգ դպրոցից։

Թեզիսներ կազմելու աշխատանքն իրապես դուրս  
ե գալիս նեղ խմաստով գրքի աշխատանքի սահման-  
ներից և թեսակնիսում ե ինքնուրույն գրավոր աշխա-  
տանքների բնագավառը, վորովճետու թեզիսներ գրվում  
են վոչ այնքան տվյալ կարդացած գրքի, հոդվածի  
հիմնական մտքերը ձևակերպելու, վորքան վորես մշակ-  
վող, ուսումնասիրվող հիմնական դրույթները, մտքերը  
ձևակերպելու համար։

Թեզիսները կարդացած գրքի, հոդվածի կամ իր-  
սեփական աշխատության, զեկուցման, դասախոսու-  
թյան հիմնական դրույթների, մտքերի կատեգորիկ  
ձևով (պնդման կամ բացասաման) սեղմ, լակոնական  
ձևակերպումն են (լյադով)։

Թեզիսները կոնսպեկտից տարբերվում են նրանով,  
վոր այստեղ հիմնական մտքերն ավելի սեղմ, խորաց-  
րած ու մաքախմալ ճշգրտությամբ են արտահայտված։  
Յեթե գրքի, հոդվածի պլանի յուրաքանչյուր կիս  
կոնսպեկտի մեջ արտահայտվում ե մեծ մասամբ մի-  
քանի նախադասությունների և նույնիսկ պարբերու-  
թյունների միջոցով, այդ նույն կետը թեզիսների մեջ  
արտահայտվում ե սովորաբար մի պարզ կամ բարդ  
նախադասության մեջ, վորն արտահայտում ե մի-  
թեզուղ և բարդ, բայց ամբողջացած միտք։ Թեզիս-

ները կարող են լինել պարզ, յերբ ուղղակի մի վորեն  
միտք, դրույթ պնդում կամ ժխտվում ե, և բարդ, յերբ  
այդ պնդումը հիմնավորվում, պատճառաբանվում, ա-  
պացուցվում ե։

Թեզիսներից յուրաքանչյուրը պետք ե արտահայտի  
մի ամբողջացած միտք, բայց նույն խնդրին վերաբե-  
րող բոլոր թեզիսները պետք ե իրար հետ արամարա-  
նորեն կապված լինեն, վորպեսզի դրանց բոլորի ամ-  
բողջությամբ կարելի լինի տալ մի վորես իննդրի,  
պըռորելմի համառոտ, սեղմ լուսաբանումը։ Թեզիսներից  
յուրաքանչյուրը գրվում ե նոր տողից և սովորաբար  
համարակալվում ե։

Թեզիսների աշխատանքը դպրոցում պետք ե հենվի  
ու զարգացումը կազմի կոնսպեկտի հետ կապված աշ-  
խատանքների, աշակերտները պիտի հետզհետե վարժ-  
վեն ջոկել, ընդգծել տվյալ հոդվածի հիմնական, առանց-  
քային մտքերը և այդ ձևակերպել թեզիսների միջոցով։

Վորպեսզի ավելի պարզ լինի պլանի, կոնսպեկտի  
և թեզիսի առնչությունն ու տարբերությունը, նույն  
չուպովի գրքից տալիս ենք մի նմուշ (կենիսը 1905  
թվի հեղափոխության մասին)։

○○

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ (ՎԵՊԻՍԿԻ) ՅԵՎ ՑԻՑԱՏՆԵՐ

Մինչև այժմ նշված գրանցման ձեռվը, կարդացած լուսանը, կոնսպեկտը, թեղիսները, — պիտանի և հարմար են միայն այն գետքում, յերբ հիմնական նպատակը տվյալ հոգվածի, գլուխ, գրքի խորացրած ընթերցումն ու յուրացումն են. Աշխատանքի այդ ձեռվ գերակռող ե միջնակարգ դպրոցում, մանավանդ նրա ստորին դասարաններում. այս դեպքում գրքով աշխատանքով մանափակվում են նեղ իմաստով գրքի աշխատանքով. կարդացածը և յուրացրածը, — գոներ տվյալ ժամանակաշրջանում, — առնասարակ չի ոգտագործվում ուրիշ տիպի՝ տեսական կամ գործնական աշխատանքների համար, — ինչպես, որինակ, զեկուցում կազմել մի վորեկի տեսական կամ գործնական արժեք ունեցող խնդրեի մասին պատճեն՝ պատճենությունում: Այդ դաշտան 2—3 միլիոն պլոտեալների ստածությունների գործարքությունը պայմանավոր շարժում տառաջնորդ պատրաստական մասնանիւթիւ նորոգում և առաջնորդությունը մի շարք գլուխական սպոտամարտություններու մասնակիւթեամբ այդ անցուցությունը նրա համար հաջողակիությունը, նրա մեթոդները և դուռը:

Գ Լ Ա Շ	Կ Ռ Ն Ս Գ Ե Կ Տ
1.	1. 1905 թ հունվարի 9-ին հայաց եղանակով մի քանի անգամ անդամակիւթեամբ կազմակերպությունը և անդամակիւթեամբ հաջողական կազմակերպությունները. 1905 թ. համարից հետո:
2. Հեղափականական մասնակիւթյունը յիշությունը:	2. Հեղափականականացման առաջնականական մասնակիւթյունը:

3. Տնօտեական յիշությունը գործարական առաջնական մասնակիւթյունը:

ընդհատման կատարվում են տեսրերի մեջ, թերթերի վրա:

Սակայն զբությունը փոխվում է, յերբ ընթերցանության ժամանակ հիմնական խնդիրը վոչ միայն և վոչ այնքան կարդացածի յուրացումն և (հետեւապես և դրան նպաստող գրանցման ձևերը՝ պլան, կոնսպեկտ և այլն), այլ կարդացած գիրքը, հոդվածը կամ, ավելի ճիշտ, զբանց առանձին տարրերը քննադատորեն ոգտագործեն և այլ աշխատանքների, տեսական կամ գործնական բնույթի կրող խնդիր լուծելու համար, այդ կարող և լինել բանալիր զեկուցում, դասախոսություն, և ողբած, շարադրություն, գիրք վորևե խնդիրի մասին և այլն: Այս բոլոր տիպի աշխատանքները պահանջվում են ավելի մեծ հասունություն և բավական բարդու վրակյալ աշխատանք: Այս տիպի աշխատանքներին միջնակարգ գպրոցը պետք և աշակերտներին մոտեցնի գոնե վերջին դասարաններում: 8—10-րդ դասարաններում աշակերտներին տրվելիք հանձնարարությունները, նրանց բանավոր զեկուցումները, պարագմունքների (սեմինարական պարագմունքների, ուսումնական կոնֆերանսների) ժամանակ, նրանց գրավոր շարադրությունները, ուժիքրատներն իրենց բնույթով պետք և մոտենան այդ տիպի աշխատանքներին, վորոնք պահանջում են խոչըր չափի ինքնուրույնություն ու գիտահետազոտական մոտեցում: Այդպիսի աշխատանքների առանձնահատկություններից մեկն եւ անհրաժեշտ և լինում կարգալ վոչ թե մի հոդված, գիրք, այլ բազմաթիվ գրական աղբյուրներ: Ինչպես այստեղ արդեն վոչ այնքան անհրաժեշտ և

վող գիրքը, հոդվածը մշակել անգամ կարդաւ այլ այնտեղից վերցնել այն, ինչ անհրաժեշտ ե տվյալ թեման, խնդիրը մշակելու համար, այս կամ այն թեման, խնդիրը մշակելու համար: Գործնական կամ տեսական խնդիրը լուծելու համար: Այս գեպքում, անգամ յեթե հարկավոր ե կարդացածի կոնսպեկտը կազմել, այդ պետք ե անել միայն գրքի, հոդվածի այն բաժնից, վորն անհրաժեշտ ե մեր աշխատանքի համար: Ինչպես ասվեց, վերը նշված աշխատանքը համար կիրառվում ե քաղլաճքի կամ ցիտատների ձևը: Այս կամ այն գիրքը կարդալիս մենք նախորոք ունենք վորոշ խնդիր, թեմա, վորի լուծման տեսանկյունից և մոտենում ենք թե կարդալիք գրքերի ընտրության, թե այդ գրքի ընթերցանության ժամանակ նրանց այս կամ այն գլուխ, բաժնի վրա ուշադրություն դարձնելիս և թե կարդալու ժամանակ գրքի, հոդվածի այս կամ այն դրույթները, մտքերը նշելու, քաղլաճք անելու ժամանակ:

Հեղինակի առանձին մտքերի, գրույթների, կամ գրքում յեղած առանձին տեղեկությունների, փաստերի գրքում յեղած առանձին տեղեկությունների, փաստերի գրանցումները կարող են կատարվել բառացի, հեղինացումներով, կամ գրանցողը կարող ե իր բառերով նակի բառերով, կամ գրանցողը կարող է առ գրանցությունը: Գիրադասելի յետապահ գրանցությունը մենք քաղլաճք ենք ուղին ձեւ, մանավանդ յերբ մենք քաղլաճք ենք ուղին ձեւ, մանավանդ յերբ մենք քաղլաճք ենք ուղին ձեւ, հեղինականում նշանավոր անձնավորությունների, հեղինականում նշերի մտքեր, և յերբ մանավանդ այդ մտքերը մենք նշերի մտքերն ենք մեր գեկուցումների, հոդվածների, շարապիտ բերենք մեր գեկուցումների, հոդվածների մեջ, Վորքան ել գրությունների աշխատությունների մեջ, Վորքան մենք աշխատենք ճշուությամբ ու հարազատորեն տալ անհրաժեշտ մեր բառերով, անձիշտ մեկնարանում այդ մտքերը մեր բառերով, անձիշտ մեր բառերով, հաճախ անխուսափելի յեն վահեն ու ըմբռնումները հաճախ անխուսափելի յեն վահեն:

նում: Աւրեմ վորպիս կանոն պիտի ընդունել բառացի քաղվածքը (արտագիր—ՅԱՊԱԾԵ): Մեր բառերով կարող ենք տալ միայն յերկրորդական հեղինակների ասութները, մասնավանդ յերբ դրանք ձգձգված են և անհրաժեշտ ե մի քանի բառով տալ զրանց եյությունը:

Ինչով պետք ե ղեկավարվել քաղվածքների ժամանակ. Լյադովի խմբագրությամբ լույս տեսած՝ վերը հիշված գրքում առաջարկվում են հետևյալ ընդունելի խորհուրդները. — ա) Քաղվածք անել աղբյուրի հիմնական դրույթները, վորոնք պատասխան են տավս մեր առջև դրած խնդրին, ընդվորում ը) Քաղվածքն անել բառացի, ճշությամբ. յեթե կարեք չկա քաղվածք անելու ամբողջ ֆրազը, կամ պարբերոցը, այդ դեպքում բաց թողած բառերի տեղը պետք ե բազմակետ դնել Բառացի բնբաժան այսպիսի մեջբերումները, յերբ ոգտագործում ենք մեր այս կամ այն տիպի գրավոր աշխատության մեջ, դրանք (մեջբերումները) պետք ե առնվեն չակերտների մեջ, գ) Քաղվածք անել այն փաստերը և թվական տվյալները, վորոնք հաստատում են վերը հիշված դրույթները; դ) Բացի փաստերից և թվերից՝ քաղվածք այս կամ այն գնահատականը (վորև դեմքի, խնդրի մասին—արված հայտնի անձնավորության, հեղինակի կողմից), բանաձեռները, սահմանումները և այլն. Յեթե տվյալ աղբյուրում անհրաժեշտ տեղեկությունները շարադրված են ձգձգված ձևով, կարելի յե եյականն իր սեփական բառերով՝ համառոտ կերպով գրանցել:

Քաղվածքները պետք ե կատարել վորքան կարելի յե քիչ, քաղվածք անել միայն այն, ինչ իրապես անհրաժեշտ ե զեկուցման, հոգվածի և այն բաների հա-

մար: Ավելորդ յերկար քաղվածքները հաճախ վոչ թե ոգնում, այլ խանդարում են: Ավելորդ կրկնվող ու ձգձգված քաղվածքներից խուսափելու գլխավոր միշտցներից մեկն ել այն ե, վոր քաղվածքները չկատարվեն անմիջապես կարդալու ընթացքում, այլ նախ կարգացվի ամբողջ հոգվածը, գիրքը, կամ նրա առանձին բաժինները, վորևե ձևով նշվեն (հենց գրքի վրա կամ առանձին թիրթի վրա՝ մատնանշվեն հջերը) այն տեղերը, վորն ընթերցողի կարծիքով պետք ե քաղվածքը անել: Ամբողջը կարդալուց հետո մեկ ել աչքի յենք անցկացնում այդ նշված տեղերը և ապա վերջնականացնելու վորոշում, թե դրանցից վերը պետք ե քաղվածք անել: Հակառակ դեպքում մենք կարող ենք քաղվածք անել մի այնպիսի միտք, կտոր, վորը գրքի, հոդվածի հետագա եջերում, տողերում ավելի ճշգրիտ, լրիվ ու սպառիչ կերպով և ձևակերպված: Քարտերի կամ առանձին թիրթերի վրա քաղվածքներ կատարել և նպատակահարմար ձևով ոգտագործել—աշակերտները պետք ե կարողանան միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանից սկսած՝ իրենց շարադրությունների, ունիվերսատների, զեկուցումների համար:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ ՈՒ ԶԵՂԵՐԸ. ՔԱՐՏԱ-  
ՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ

Քաղվածքների յերկու ձե կա, ա) յերբ վորևե գըրքից, հոգվածից կատարված քաղվածքները գրանցվում են իրար հետևյաց մի ընդհանուր տեսքի մեջ, կամ մեծ թիրթի վրա (տեսարային սիստեմ). բ) յերբ յուրաքանչյուր դրույթի, մտքի, փաստի և այլն քաղվածքը

կատարվում ե առանձին քարտի կամ թերթիկի վրա (Քարտային սխատեմ): Սրանցից առաջին ձևի համարյա միակ առավելությունն այն ե, զոր տնտեսվում ե գրելու թուղթը: Քաղվածքների գրանցման այդ ձևը կարելի յե կիրառել միայն այն դեպքում, յերբ կատարվող աշխատանքը (զեկուցում, շարադրություն և այլն) շատ պարզ ե, և յերբ մանավանդ դրա համար ոգտագործված գրական աղբյուրների թիվը շատ սահմանափակ ե (1—2): Մյուս բոլոր գեղքերում, յերբ գրվելիք գեկուցման, շարադրության, հոդվածի, գրքի և այլն թեման բարդ ե, իր հերթին պարունակում ե մի շարք յենթաթեմաներ, խնդիրներ, և, բացի այդ, ոգտագործվող գրական աղբյուրները բազմաթիվ են,—անպայման նպատակահարմար ե քաղվածքների քարտային սխատեմը, զորը հնարավորություն ե տալիս քարտերը դասավորելու՝ ըստ քարտի վրա գրանցված թեմայի, խնդիրի,—մի բան, զոր գեկուցումը, շարադրությունը գրելիս չափազանց հեշտացնում ե աշխատանքը: Քարտային սխատեմը, չնորհիվ քարտերի, շարժունություն, հնարավորություն ե տալիս այդ նույն քարտերի մի մասը, թերևս ուրիշ դասավորումով, ուրիշ թեմայի համար ոգտագործելու: Դրանք դառնում են մի տեսակ աղյուսակներ, վորոնք համեմատաբար հեշտ կարող են ոգտագործվել զանազան կառուցումների համար: Յուրաքանչյուր քարտի վրա պիտի գրանցել միայն մի միտք, փաստական տվյալ և այլն: Քարտերի վրա կատարած քաղվածքների հետագա ոգտագործումը դյուրացնելու համար անհրաժեշտ ե դրանք դասավորել վորոշ սխատեմով՝ ըստ նրանց մեջ գրանցված թեմայի, հարցի և այլն: Նման թեմաներ, հարցեր շոշա-

փող քարտերը վորեւ ձևով պետք ե առանձնացված ու մի տեղ համախմբված լինեն (ծրաբներում, թղթապահնակներում կամ հատուկ արկղներում):

Այդ քարտերի հետագա ուսցիոնալ և ձիւտ ողտագործմանը պիտի նպաստի և նրանց արտաքին ձևավորումը, ինչպես և գրանցման վորոշ ձևը: Քարտերը (կամ թերթիկները) պիտք ե լինեն նույն չափի և ձևի: ամենաստարածված ֆորմատները համարվում են 128+210 մմ. և 105+105 մմ. գրտերը:

Նպատակահարմար ե գրել քարտի միայն մի եղի վրա: Քարտի վրա պիտի նշանակել թեման (վորին վերաբերում ե տվյալ քաղվածքը), հարցը (այդ թեմայի վհի հարցին ե վերաբերում), հեղինակը, գրքի անունը, հրատարակությունը, եջը, բուն քաղվածքը: Այստեղ տալիս եմ գործածվող այդպիս քարտերից մեկի ձևը և փորմատը:

ՁԱՐՑԻ (հեղափոխական մասին), Հեղինակի, գրքի անունը, երական տեսության դերը կուտակցության համար (Հենին՝ Շինչ անելա, ընտիր յերկիր, 2-րդ մար):

ՔԱՂՎԱԾՔԻ (Խոկ այժմ մենք միայն կումենում ենք մատնանել, վոր տուազավոր մարտիկի դերը կոտարել կարող ե միայն այն կուտակցությունը, վոր դեկավարվում ե տուազավոր բերլայով):

ՅԵԹԵ քարտերը տպարանում չեն տպագրվում: այլ ինքն ընթերցողն ե պատրաստում, ավելորդ ժամանակ չվատանելու համար կարելի յե համապատասխան սյունակներում չգրել՝ «հարց», «թեմա», «քաղվածք» և այլն, այլ ուղղակի գրել գրանց համապատասխան բովանդակությունը (Հենինյան ուսմունքը կուտակցության

մասին. հեղափոխական տեսության դերը կուսակցության համար և այլն):

Վերջապես կարելի յե ավելի պարզ ձեռի քարտ կամ թերթիկ գործածել, անգամ առանց վորեւ սյույնակի. միայն այդ դեպքում նույնպես հիշված բոլոր նշումները (թեմա, հարց, հեղինակ և այլն) վորոշ սիստեմով պարտադիր են:

### ՍԵՓԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ, ՄՏՔԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Կարելի յե կատարել և՛ գրքի վրա (յերբ գերքը սեփական ե, այն ել հասարակ մատիտով), և՛ առանձին թղթի վրա. դպրոցում պիտի ընտրել և աշակերտներին սովորեցնել վերջին ձեւը: Այդ հարցերն սկզբում մեծ մասամբ կվերաբերվեն կարդացածի այս կամ այն մասը, միտքը, նախադասությունը կամ նույնիսկ բառը չհասկանալուն, բայց հետզհետեւ աշակերտներին պետք ե ոգնել ու սովորեցնել՝ քննադատական ընթերցանությունը և դրանից բղխող հարցերի առաջադրմանն ու գրանցմանը: Այս անհրաժեշտ և մանավանդ բարձր դասարաններում, յերբ աշակերտների ձեռքը բացի դասադրքից (վորը նույնպես շատ հաճախ զժբախտաբար խոչը թերություններով, սխալներով ու քննադատելի յե լինում) տալիս ենք և ոժանդակ գրականություն, վորը կարող ե և քննադատելի լինել: Սեփական հարցերից (ինչպես և դժբանց հետ միասին) աշակերտը պիտի անցնի սեփական դիտությունների, մտքերի առաջադրմանն ու գրանցմանը: Սեփական հարցերի ու մտքերի գրանցումը կարելի յե սկզբում կատարել այն կարգով ու հաջորդականությամբ, ինչպես վոր նրանք

ծագում են: Հետադայում, յեթե այդ հարցերն ու մտքերը բազմազան են, կարելի յե վորոշ սիստեմի վերածել ըստ այն ինդիբների, վորոնց նրանք վերաբերում են: Այս դեպքում այդ հարցերն ու մտքերը նույնպես կարելի յե դրանցիւ քարտային սիստեմով:

Նույնեւր գրի վրա: Շատ հաճախ փոխանակ պլան, կոնսպեկտ կամ քաղվածքներ կատարելու, հենց կարդացած գրքի վրա յեն անում ընդդումներ, ջնջումներ, գրում իրենց հարցերը, գիտողությունները և նույնիսկ սեփական մտքերը:

Հենց սկզբից եեթ պիտի ասել, վոր գրքի վրա վորեւ նշում, ընդդում, գրանցում թույլատրելի յե կատարել միայն այն դեպքում, յերբ գիրքն ընթերցողի սեփականն ե. այն ինչ մեզ մոտ հաճախ ուրիշց կամ գրադարաններից վերցրած գիրքն այնպես են «մշակում», վոր այդ գիրքը մի քանիսի ձեռքից այդ ձեռվ կում», վոր այդ գիրքը մի քանիսի ձեռքից այդ ձեռվ անցնելուց հետո արդեն անընթեռների յե դաշնում. ուրիշի կամ գրադարանի գրքի վրա նշումներ, գրանցումներ անելն անթույլատրելի յե և անիմաստ ե դառնում այն պարզ պատճառով, վոր այդ նշումներն ու գրանցումներն ընթերցողը հետագայում ինքն ուղարկում կարող է կարող լինել կամ կարող ե կարելը և ուշադրության արժանի լինել կամ կարող կարել չի կարող (վորի համար նրանք կատարվում գործել չի կարող ի համար նշումները միայն կարող են են), իսկ ուրիշներին այդ նշումները միայն կարող են կանգարել, վորովհետեւ ինչ վոր մի ընթերցողի համար կարող ե կարելը և ուշադրության արժանի լինել կամ այդպես թվական մի ուրիշ ընթերցողի համար այդ կատարեցների մի կարող ընթերցողի ուշադրությունը չունենալ և իգորուր ընթերցողի ուշադրությունը զրայիլ (ընդդումներն ակամմայից իրենց վրա յեն կենարունացնում ընթերցողի ուշադրությունը), յեն կենարունացնում ընթերցողի ուշադրությունը), յեն կամ ինքնուրույն ու քննադատական ընթերցանու-

թյանը դեռ չվարժված ընթերցողի ուշադրությանը սխալ ուղղություն կարող են տալ: Նեռամներ լեկ գրանցումներ կարելի յեւ անել միտյն սեփական գրեի վրա և այն ել հասարակ մատիտով, վոր հարկ յեղած դեպքում կարելի լինի ջնջել:

Վեր նշված բոլոր պայմանները պահպանելու դեպքում գրքի վրա նշումներն անեն ունի այն առավելությունը, վոր նախ՝ այդ ձևով գրքի մշակումը,— համեմատած կարգացածի պլանը, կոնսպեկտը, թեղիսները կազմելու կամ քաղվածքներ անելու հետ,— ավելի քիչ ժամանակ ե խլում, մանավանդ յերը (մեծ մասմբ վորակյալ) ընթերցողը կարիք չի զգում պլան, կոնսպեկտ կամ թեղիսներ կազմելուն: Սակայն պիտի ասել, վոր թեպետ գրքի վրա նշումներ կատարելն ավելի քիչ ժամանակ ե խլում, քան գրանցումներ կամ քաղվածքներ կատարելը,— զեկուցման կամ գրավոր աշխատանքի ժամանակ ավելի հեշտ ե ոգտագործել գրանցումները, — մանավանդ յեթե գրանք քարտային սիստեմով են կատարված, քան գրքի կատարված նշումները, — վորոնք ցրված են գրքի բազմաթիվ եջերի վրա և քարտերի նման դասավորվեր սիստեմի վերածվել չեն կարող:

Գրքի վրա նշումներ, գրանցումներ անելը վորոշ չափով փոխարինում ե մինչեւ այժմ հիշատակված գրանցման հետեւյալ ձևերին: — պլանին, յերբ գրքի լուսանցքների վրա գրվում են գրքի, տվյալ գլուխ, բաժնի, պարբերույթի, հոդվածի բովանդակությանը համապատասխան վերնագրերը, ընդգծումները մոտավորապես կարող են փոխարինել տեքստուալ կոնսպեկտին կամ բառացի քաղվածքին (ցիտատին): Բացի գրանցից՝

գրքի լուսանցքներում կարելի յեւ գրել ընթերցողի մեջ առաջացած հարցերը, գիտողությունները, քննադատական մոտեցումը, սեփական մտքերը և այլն: Բացի այս բոլորից, ընթերցողը հաճախ գրքի լուսանցքներում զանազան պայմանական նշաններ ե անում, վորոնք հետագալում հեշտացնում են գիրքը նորից արագ աչքի անցկացնելու գործը:

Այս բոլոր ձևերն ընթերցողին հնարավորություն են տալիս ամբողջ կարգացածից ընտրել և ձևակերպել այն բոլորը, վորն այս կամ այն տեսակետից ուշադրության արժանի յեւ: Յերբ տվյալ գիրքը կամ նրա բաժինը, առանձին հոդվածը նման ձևով կարգացվում ե և մշակվում, բավական ե լինում անհրաժեշտության դեպքում նորից թերթել գիրքը՝ անհրաժեշտը գտնելու և ոգտագործելու համար: Դպրոցական պայմաններում պետք ե ամեն կերպ աշխատել վոր աշակերտները գրքերի վրա նշումներ չանեն: Այս պատվերը վերը բերում ե մանավանդ գրքերին, վորոնք պետք ե որինակելի մաքրությամբ պահպանեն:



«Ազգային գրադարան



NL0130840

